ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հեղինե Բիշարյանի, Հովհաննես Մարգարյանի, Խաչիկ Հարությունյանի, Իշխան Խաչատրյանի և Մարզպետունի Մանուկյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է երիտասարդ ընտանիքներին աջակցություն ցուցաբերելու խնդիրները և գտնում է, որ նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնության տրամադրումն անհրաժեշտ է իրականացնել «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով ամրագրված հասցեականության սկզբունքի համաձայն, ըստ որի՝ սոցիալական ծառայությունները տրամադրվում են իսկապես

դրա կարիքն ունեցող անձին, այս պարագայում՝ նորաստեղծ ընտանիքներին: Այդ առումով նախագծում անհրաժեշտ է հստակ սահմանել այն չափանիշները, որոնց հիման վրա հնարավոր կլինի որոշել նորաստեղծ ընտանիքի կարիքավորության աստիճանը: Բացի դրանից, նկատի ունենալով, որ ներկայացված նախագծի հիմնավորման համաձայն նախագիծը նպատակ ունի նպաստելու ծնելիության աճին, գտնում ենք, որ միանվագ դրամական օգնությունը պետք է տրամադրվի երիտասարդ ընտանիքներին:

2. 2-րդ հոդվածով նախատեսված՝ նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու հետ կապված հարաբերությունները, որպես կարգավորման առարկա, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված չեն:

3. 6-րդ հոդվածի 1-ին մասում «ՀՀ օրենսդրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «օրենքով» բառով, քանի որ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը:

4. Նախագծի ընդունումը հանգեցնում է լրացուցիչ հատկացումների անհրաժեշտության, սակայն նրանում նշված չէ նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնության տրամադրման ֆինանսավորման աղբյուրը, որն անհրաժեշտ է հստակեցնել: Եթե այն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է, ապա այդ նպատակով համապատասխան միջոցներ նախատեսված չեն ինչպես Հայաստանի

Հանրապետության 2011-2013 թվականների պետական միջին ժամկետ ծախսերի ծրագրով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջին ժամկետ ծախսերի ծրագրի նախագծով: Ուստի, վերջինիս ընդունման դեպքում այն կմնա առանց ֆինանսական ապահովման: Ըստ վիճակագրության՝ տարեկան ամուսնությունների թիվը 10000 է, որից մոտավորապես 8000-ը՝ առաջին անգամ գրանցվող, և, հետևաբար, նախագծի ընդունման դեպքում պահանջվող գումարի մոտավոր չափը կկազմի 8000 x 300000=2,4 մլրդ դրամ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանը:

Ներկայացնում ենք օրենքի նախագծի ընդունման դեպքում ընդունումից հետո դրա կատարումն ապահովող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կամ այլ իրավական ակտերի ցանկը և ժամանակացույցը՝

5-րդ հոդվածի 1-ին մաս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու կարգն ու չափը հաստատելու մասին» որոշում՝ 3 ամիս:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:
2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐԱՍՏԵՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Նորաստեղ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

<<Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

<<Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 271 և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի <Սոցիալական պաշտպանության ոլորտի առանձին ենթաոլորտների բնութագրիչները հաստատելու մասին> N 34-Ա/1 հրամանի համաձայն:

Գնահատման արդյունքում՝

1.Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագիծն ունի դրական ազդեցություն:

2.Նախագծի դրական ազդեցությունը առավել նկատելի է ժողովրդագրական հիմնախնդիրների ենթաոլորտի վրա և ունի ինչպես ռազմավարական ազդեցություն, այնպես էլ դրական ազդեցություն շահառուների վրա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

« Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1.«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենքի) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է.

Նորաստեղծ ընտանիքների միանվագ դրամական օգնության նվազագույն չափը չի կարող պակաս լինել, քան 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը:

Նախագծի վերոնշյալ հոդվածի ընդունումը ենթադրում է ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների անհարժեշտության, սակայն բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն հնարավոր է տալ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի նիստի N 42 արձանագրային որոշմամբ սահմանված ձևաչափով ներկայացված տեղեկանքի և անհրաժեշտ հաշվարկ-հիմնավորումների առկայության պարագայում:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Նախագիծ
Պ-1161-06.05.2011-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորման առարկան

1.Սույն օրենքը կարգավորում է նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

Հոդված 2. Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնության մասին օրենսդրություն

1.Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, սույն օրենքով եւ այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Նորաստեղծ ընտանիք - նորաստեղծ ընտանիք է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջին անգամ ամուսնացող տղամարդու եւ կնոջ ամուսնությունը գրանցելու օրվանից մինչեւ 1 (մեկ) տարի ժամկետը ստեղծված ընտանիքը:

2.Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն- նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնությունը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ընտանիքներին տրամադրվող միանվագ դրամական օգնությունն է:

Գլուխ I I

Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն իրավունքը

Հոդված 4. Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնության իրավունքը

1. Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնության իրավունքը տարածվում է այն նորաստեղծ ընտանիքների վրա, որոնք առաջին անգամ իրենց ամուսնությունը գրանցել են ՀՀ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, եւ որոնց անդամներից գոնե մեկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Հոդված 5. Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն ցուցաբերելու կարգը եւ չափը

1.Նորաստեղծ ընտանիքներին միանվագ դրամական օգնություն ցուցաբերելու կարգը եւ չափը սահմանում է ՀՀ կառավարությունը

2. Նորաստեղծ ընտանիքների միանվագ դրամական օգնության նվազագույն չափը չի կարող պակաս լինել, քան 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը:

Գլուխ I I I

Պատասխատվությունը սույն օրենքի խախտման դեպքում

Հոդված 6. Քաղաքացիների պատասխանատվությունը

1.Նորաստեղծ ընտանիքների միանվագ դրամական օգնության կարգը սահմանող փաստաթղթերում ոչ հավաստի տեղեկությունների հայտնաբերման դեպքում արդեն վճարված գումարը ենթակա է վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 7. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը.

1.Սույն օրենքը խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Գլուխ IV

Եզրափակիչ դրույթ

Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը

1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012թ. հունվարի 1-ից եւ գործում է դրանից հետո ծագած իրավահարաբերությունների համար:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում ծնելիության ցածր մակարդակը, որը պայմանավորված է նաեւ ամուսնությունների թվի ցածր ցուցանիշով, ինչպես նաեւ ելնելով Հայաստանի Հանրապետության դեմոգրաֆիական անվտանգության ապահովման խնդիրներից, անհրաժեշտություն է առաջացել պետության կողմից դրամական միջոցների տրամադրմամբ ՀՀ-ում խրախուսել ամուսնությունները եւ աջակցել նորաստեղծ ընտանիքներին:

Սույն օրենքը սահմանում է նորաստեղծ ընտանիք հասկացությունը եւ նախատեսում է օրենքով սահմանված կարգով ամուսնությունը գրանցելուց հետո վերը նշված ընտանիքներին 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամից ոչ պակաս միանվագ դրամական օգնության տրամադրում:

Օրենքը հնարավորություն կտա նորաստեղծ ընտանիքներին լուծել առաջնային անհրաժեշտության ծախսերից բխող ֆինանսական խնդիրները, ինչպես նաեւ կնպաստի Հայաստանի Հանրապետությունում ժողովրդագրության եւ ծնելիության հետ կապված որոշակի խնդիրների լուծմանը: